


Վ. Ն. ՌՅԱՐՈՎ

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1940

47

614

n-56

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

110
2-5



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

4 JUL 2013

6147

3502
21688

БИБЛИОТЕКА
Академии Наук
УРСР

34142 кн

В. Н. РЯБОВ
Санитарное
благоустройство
в колхозе
Армгиз, Ереван, 1940 г.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԿՈՒՆԿԵՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ, ԿՈՄՍՏԻՅԱՆ ԿՈՒՆԵՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

932653

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱԿՐԱՆ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Կոլտնտեսային կարգը հաղթանակել է վերջնականապես և անդառնալիորեն: Կոլտնտեսականների կյանքը տարեց-տարի ավելի ունեվոր ու կուլտուրական է դառնում: Նոր բարեկարգ բնակարանները, վոչ միայն տարրական, այլ և միջնակարգ կրթութայն դպրոցների ցանցը, ակումբները, մանկահրապարակները և մսուրները, հասարակական բաղանիքները, անասնաբուժական կոլտնտեսային ապրանքային ֆերմաները և ուրիշ հասարակական ու տնտեսական շենքերը փոխել են մեր կոլտնտեսային գյուղերի դեմքը: Խոշոր շինարարութայն հետեվանքով կոլտնտեսային գյուղը կարիք է զգում նոր և լավ բարեկարգման, բարեկարգում, վորը համապատասխան լինի ժամանակակից կոլտնտեսային գյուղերի տնտեսական պայմաններին և կոլտնտեսականների կուլտուրական պահանջներին: Այս ուղղութայն արդեն շատ բան է արված:

Հարյուրավոր կոլտնտեսութայններում կառուցված են նոր գյուղական ջրմուղներ: Հազարավոր կոլտնտեսային գյուղեր ունեն իրենց էլեկտրական լուսավորութայնը: Բաղմաթիվ կոլտնտեսային գյուղերում շինված են լավ սալահատակված փողոցներ ու մայթեր: Կոլտնտեսութայններում կատարվում են պտղատու այգիների տնկումներ և ուրիշ կանաչապարզումներ, կառուցվում են կուլտուրայի ու հանգստի կոլտնտեսային պարկեր: Կոլտնտեսային գյուղերի սանիտարական բարեկարգման այս միջոցառումների կողքին դեռ ևս հետամնաց բնադավառ և հանդիսանում տնտեսութայն թափոնները հեռացնելու և տնփնաս դարձնելու աշխատանքը:

Մինչդեռ կոլտնտեսային գյուղի շրջակայքի մաքրութայնը, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնամերձ հողմասի առանձնապես բնակարանների, դպրոցների, մսուրների ու մանկահրապարակներին մոտիկ անբխորիայի մաքրութայնը կարեվորագույն միջոցառում և հանդիսանում կոլտնտեսականների առողջութայն պահպանման ուղղութայն:

Անհրաժեշտ է կոլտնտեսային գյուղի և կոլտնտեսականների առան-
ձին տնամերձ հողամասերի տերիտորիան կանոնավոր և իր ժամանակին
մաքրել թափոններից ու անպետք արտաթորութուններից: Այդպիսի
թափոններ և անպետք արտաթորութուններ են հանդիսանում.

1) Մարդկային կեղտոտութունները (կղզղանքը և մեզը). 2)
տնտեսութան կեղտաջրերը-լվացքաջրերը (հատակները, ամանեղենը,
սպիտակեղենը լվանալուց հետո). 3) ընտանի կենդանիների դոմաղբը,
մեզը և թռչունների ծերարը. 4) կենդանիների դիակները, անասուն
մորթելիս թափված թափոնները, փչացած միսը. 5) ուտելիքների
կլեպները, մնացորդները և տականքները. 6) փչացած և նևրված
բանջարեղենները. դանազան աղտոտութունները, բակի և փողոցի կեղ-
տոտութունները և այլն:

Այս թափոնները լուրջ վտանգ են ներկայացնում մարդու առող-
ջութան համար, յեթե նրանք անկանոն են պահվում, իր ժամանա-
կին չեն հեռացվում և անկանոն են ողտաղործվում: Ամենամեծ
վտանգ հանդիսանում են մարդկային կեղտոտութունները, կենդանի-
ների դիակները և կենդանական այլ թափոնները:

Ինչո՞ւմն է կայանում այս վտանգը:

Հատուկ հետադատութուններով հաստատված է, վոր տնտեսու-
թյան թափոնների մեջ լինում են այնպիսի նյութեր, վորոնք ընդու-
նակ են արագորեն նեխվելու և քայքայվելու, արտադրելով դարչահոտ
գազեր ու մնասակար նյութեր, որինակ ամմոնիակ, ծծմբաջրածին, մե-
տան և այլն:

Կեղտոտութունները (մեզը և կղզղանքի հեղուկ մասերը) ընկնելով
հողի մեջ, կարող են ներծծվել և անցնել դետնի խորքը, վարակել ստոր-
յերկրյա ջրերը, վորոնցից ջուր են ստանում կոլտնտեսային ջրհորները:
Յեթե հողի մեջ քիչ քանակությամբ թափոն է ընկնում, այն աստիճա-
նաբար քայքայվում է հողում և վեր է ածվում մարդու համար ան-
վնաս նյութերի: Տեղի յե ունենում, այսպես կոչված, հողի ինքնամաք-
րում: Իսկ յեթե թափոնները մեծ քանակությամբ է ընկնում, հողի մեջ
և յերկար ժամանակ, այդ դեպքում հողը չի կարողանում քայքայել
նրան: Տեղի յե ունենում հողի ուժեղ կեղտոտում թափոններով ու
այնպիսի նյութերով, վորոնք գոյանում են նրանց նեխման ժամանակ:
Խիստ կեղտոտված հողից փչանում են ջրհորներին և կոլտնտեսային
ջրամատակարարման ուրիշ աղբյուրներին մոտիկ գտնվող հողը և
ջուրը: Այդպիսի կեղտոտված տեղում բնակարաններ և այլ շենքեր
կառուցել չի կարելի: Հայտնի յե նույնպես, վոր թափոնների մեջ,
առանձնապես վարակիչ հիվանդութուններով հիվանդ մարդկանց
թափոնների մեջ գտնվում են մեծ քանակությամբ և յերկար ժամա-

նակ կենդանի վիճակում ապրող վարակիչ միկրոբներ (մանրեններ),
այսինքն հասարակ աչքով անտեսանելի մանրադույն կենդանի ելակ-
ներ, վորոնք կարող են մարդկանց վարակել հիվանդութուններով:
որինակ, վորովայնատիֆով, պարատիֆով, դիզենտերիայով, արյու-
նալուծով և այլն:

Հաճախ թափոնների մեջ լինում են նաև մեծ քանակությամբ
ձիճուների ձվեր, վորոնք արտադրվում են ձիճուներով վարակված
մարդկանց աղիքներից՝ կղզղանքի հետ:

Ձիճուները թափոններից ընկնելով հողի, ջրի մեջ և դանազան
առարկանների վրա, վարակում են մարդկանց:

Թափոնները ճանձների համար սիրելի ապրելատեղ են հանդիսա-
նում: Թափոնների հոտը, առանձնապես ձիերի և խոզերի աղբի հոտը,
դրավում է ճանձերին: Ձանձերը նստում են դոմաղբի և ուրիշ թա-
փոնների վրա և նրանց մեջ մեծ քանակությամբ ձվեր են դնում,
վորոնցից հետագայում դուրս են գալիս նոր ճանձեր: Ձանձերն ել
մեծ վնաս են հասցնում մարդուն: Նրանք բաղմամբիվ վարակիչ
հիվանդութունների տարածողներ են (դիզենտերիա, վորովայնատիֆ,
ամառային մանկական լուծեր և այլն):

Այս տեսակետից առանձնապես վտանգավոր են սենյակի ճան-
ձերը: Նրանք նստելով զանազան թափոնների, այդ թվում և հիվանդ
մարդկանց արտաթորութունների վրա, կարող են տեղափոխել վա-
րակիչ հիվանդութունների միկրոբներ: Միկրոբները հիվանդների
խորխի ու կղզղանքի մասնիկների հետ կապում են ճանձերի թաթիկ-
ներին, կնճիթին, փորիկին և այնուհետև նրանց միջոցով փխանց-
վում են անդամթերքների, տնային առարկանների և մարդկանց վրա:
Վերջապես բաղմամբիվ թափոններ կերակուր են ծառայում առեստների
ու մկների համար և նպաստում են նրանց բաղմացմանը: Առեստներն
ել վոչ միայն տնտեսութանն են վնասում, այլ և մարդու առողջու-
թյանը, քանի վոր նրանք տարածում են վորոչ վարակիչ հիվանդու-
թյուններ՝ վորովայնատիֆ, դիզենտերիա, տուլարեմիա և այլն:

Մեր ասածներից պարզ յերեվում է, թե ինչու չի թույլատրվում
թափոններ լցնել կոլտնտեսական տնամերձ հողամասում, կոլտնտե-
սական բնակարանին, մոուրին, դպրոցին և ուրիշ շենքերին մոտիկ
դանվող տեղերում:

Կոլտնտեսային գյուղը բոլոր տեսակի թափոններից մաքրելու
կանոնավոր կազմակերպումը կոլտնտեսութունների սանիտարական
բարեկարգման լավացման կարեւորագույն միջոցառումն է հանդիս-
անում:

Միևնույն ժամանակ թափոնները մեծ ոգտավտությամբ կարելի

յն ուղտազործել կոլտնտեսութեան համար: Թափոնները և կեղտոտութեանները պարունակում են արժեքավոր նյութեր—ազոտ, ֆոսֆոր, կալիում և այլն, այսինքն այնպիսի նյութեր, վորոնք անհրաժեշտ են կոլտնտեսային դաշտերը և բանջարանոցները պարարտացնելու համար:

Առանց վորեւ լրացուցիչ ծախսերի կոլտնտեսականները թափոններից կարող են ստանալ մեծ քանակութեամբ կոմպոստային¹⁾ որդանական պարարտանյութ, վորը կարեւոր դեր է խաղում հողի բերքատուութեանը բարձրացնելու գործում:

Հարկավոր է թափոնները հավաքել վորոշ տեղերում և կանոնավոր կերպով ուղտազործել նրանց:

Կեղտոտութեանները (կղկղանքը, մեղը) հավաքելու և պահելու համար յուրաքանչյուր կոլտնտեսականի բակում, յուրաքանչյուր հասարակական շենքին կից (դպրոց, մսուր, մանկահարսպարակ, աղւակ) պետք է կառուցված լինի արտաքին:

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻ ԱՐՏԱՔՆՈՑ ՊԵՏՔ Ե ԿԱՌՈՒՑԵԼ ԿՈՆՏՆԵՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կոլտնտեսային գյուղերում կարելի է հանձնարարել մի քանի տիպի արտաքինների կառուցում. ա) սառը արտաքինոց աղբահորով. բ) տաք արտաքինոց (լյուֆտ-կոլեկտ). գ) արտաքինոց, վորի կեղտոտութեանները ծածկվում են տորֆով, չոր տորֆե ցամաքով, տորֆե մանրուքներով, մոխիրով և այլն. դ) Ֆինլանդական տիպի արտաքինոց: Ինչպե՞ս և ինչպիսի՞ արտաքինոց կառուցել կոլտնտեսութեանում: Պա մի հարց է, վորը հետաքրքրում է շատ կոլտնտեսականներին: Այս խնդրին մի քանի խոսքով պատասխանել չի կարելի, ուստի մենք տալիս ենք դանազան տիպի արտաքինոցների կառուցման նկարագրութեանը:

ա) Ս ա ռ ը ար տ ա ք ի ն ո ց աղ բ ա հ ո Ր Ո Վ: Այս տիպի արտաքինոցը կառուցվում է կամ բնակելի տանը կից ցուրտ շենքում, կամ կոլտնտեսականի բակում բնակարանից մի վորոշ հեռավորութեան վրա: Այդպիսի արտաքինոցի պատերը, հատակը, կտուրը պետք է լինի ամուր, առանց ձեղքերի: Արտաքինոցի դուռը պետք է ամուր փակվի: Ամուր փակվող կափարիչ սարքվում է նաև աթոռակի (աչ-

1) Կոմպոստ է կոչվում այն հումուսը, վորն իր մեջ պարունակում է ազոտի, ֆոսֆորի, կալիումի բավականաչափ քանակութեան, վոր ստացվում է կուրտների կամ փոսերի մեջ կենդանական և բուսական թափոնների ու կեղտոտութեանների քայքայման հետևանքով:

քի) վրա: Արտաքինոցի շենքը լուսավորելու և ոդափոխելու համար կառուցվում են լուսամուտներ: Արտաքինոցի տարածութեան չափը մեկ կոլտնտեսականի ընտանիքի համար, սովորաբար, մոտ մեկ քառակուսի մետր է: Արտաքինոցի շենքի բարձրութեանը պետք է լինի 2 մետրից վոչ պակաս: Աղբահոր կառուցելիս հարկավոր է անպայման պահպանել սանիտարիայի տարրական պահանջները: Այսպես, բնակելի տանը կից գտնվող արտաքինոցի աղբահորը պետք է հեռու լինի տան հիմքից առնվազն մեկ ու կես մետր և ջրհորից՝ առնվազն 20—30 մետր: Չի կարելի կառուցել այնպիսի աղբահորեր, վորոնք ներծծում են կեղտոտութեանները, վորովհետև այդ դեպքում հեղուկ կեղտոտութեանները կներծծվեն հողի մեջ և աղբահորից կանցնեն դեմին խորքը: Այդպիսի վատ, անփութորեն կառուցված ներծծող աղբահորից էլ սովորաբար տեղի է ունենում բնակարանի մոտերքի և ջրհորի ջրի կեղտոտումը անմաքրութեաններով: Դրանից խուսափելու համար աղբահորի հատակը և պատերը պետք է կառուցել կեղտոտութեանների համար անթափանցելի: Այդպիսի աղբահորեր կարելի է կառուցել փայտից, աղյուսից, քարից և բետոնից: Փայտյա աղբահորը կառուցվում է մեկը մյուսին ամուր կերպով հարող գերաններից կամ հաստ տախտակներից, նա ներսից պետք է լցված լինի խճուճով և յերկու անգամ ձյուլած:

Աղյուսե կամ քարե աղբահորեր կառուցելիս ամենից լավ է շարվածքը կատարել ցեմենտի շաղախով: Փայտյա աղբահորի հատակը և պատերը պետք է արտաքուստ պատված լինեն լավ տրորված և շերտ առ շերտ տոփանված կավի 30—35 սանտիմետր հաստութեան ունեցող մի շերտով: Այսպիսի փոսը վերեկից ծածկվում է անջրաթափանց վրածածկով, վորը պատրաստվում է փայտից, աղյուսից, քարից կամ բետոնից. այդ վերնածածկի վրա շինվում է մի բացվածք (լյուկ), յերկու ամուր փակվող կափարիչներով, հորը մաքրելու և անհրաժեշտ վերանորոգումների համար:

Աղբահորի պարունակութեանը սառչելուց և նրանից դարչահոտ գազերի դուրս գալուց խուսափելու համար բացվածքի (լյուկի) յերկու կափարիչների միջև գտնվող տարածութեանը պետք է լցնել տորֆով, չոր ծղոտով կամ չոր հողով: Վերպետի շրջապատի տեքիտորիայից աղբահորի մեջ անձրևաջրեր և հալված ձյունի ջրեր չցվեն, հորի շուրջը կառուցվում է լավ տոփանված թեքվածք, վորը մակերեսային ջրերը հեռացնում է աղբահորից:

Աղբահորից դարչահոտ գազերը հեռացվում են սղաքաչ խողովակ կառուցելու միջոցով. այդ խողովակի ստորին ծայրը գտնվում է աղբահորի վերին մասում, աթոռակի տակ, իսկ վերին ծայրը դուրս է

գալիս կտուրի վրա: Նկար 1-ում ցույց է արված նման արտաքինոցի կառուցվածքը:


բ) Տ ա ք ա ր տ ա ք ն ո ց ը (լյուֆտ-կլոզետը) մի շարք տեսակետներից ավելի լավ և հարմար է սառը արտաքինոցից: Այդպիսի արտաքինոցը կառուցվում է շենքին կից և տաքացվում է ուրիշ վառարանով:

Լյուֆտ-կլոզետի աղբահորը կառուցվում է այնպես, ինչպես սառը արտաքինոցի աղբահորը: Լյուֆտ-կլոզետի տարբերությունը միայն այն է, վոր աթոռակի տակը կառուցվում է ձգվածք (ձղական խողովակ), վորը դուրս է գալիս Լյուֆտ-կլոզետը տաքացնող մոտակա վառարանի ծխանցքի մոտ (նկ. 2): Այդպիսով այս ձղական խողովակի ստորին բացվածքը գտնվում է աթոռակի տակ և միացված է աղբահորի հետ, իսկ վերին արտաքին բացվածքը դուրս է գալիս վառարանի խողովակի հետ միասին շենքի կտուրը: Ձղական խողովակում գտնվող ողբը, վորը տաքացվում է վառարանը վառելիս, բարձրանում է վերև և աղբահորից դուրս է քաշում դարչանոտ գաղերն ու փչացած ողբ արտաքինոցի շենքից: Այդպիսի արտաքինոցը կանոնավոր կահավորելու և սրահելու դեպքում դարչանոտ գաղերը չեն անցնում բնակելի շենքը: Ուստի Լյուֆտ-կլոզետը կարելի չէ կառուցել բնակարանի ներսում, վորը մեծ հարմարություն է ներկայացնում բնակվողներին համար:

Պետք է, այնուամենայնիվ, նկատել ունենալ, վոր Լյուֆտ-կլոզետի կանոնավոր աշխատելու համար անհրաժեշտ է մատնանշված ձղական խողովակի մշտական տաքացումը, քանի վոր միայն խողովակը տաքացնելիս է լավ կատարվում արտաձգումը և դարչանոտ գաղերի հեռացումը: Այդ պատճառով ել հանձնարարվում է Լյուֆտ-կլոզետի աղբահորի ձղական խողովակն անցկացնել խոհանոցի վառարանի ծխանելույղի կողքին: Լյուֆտ-կլոզետի շենքում չի կարելի պատրաստել ողանցք կամ ուրիշ ողահան, վորպեսզի ձղական խողովակի ողահանությունը չընդհատվի:

Այդպիսի Լյուֆտ-կլոզետ հանձնարարվում է կառուցել դպրոցում, ճաշարանում, ահումբում, մանկական հիմնարկներում, ինչպես նաև կոլտնտեսականների բնակարաններում:


գ) Կ է Ղ տ ո տ ու թ յ ու ն ն ե ր ը ծ ա ծ կ ո Ղ ա ր տ ա ք ն ո ց : Կոլտնտեսային գյուղում կարելի չէ հանձնարարել նաև այնպիսի հասարակ և եժան արտաքինոցի կառուցում, վորն աղբահորի փոխարեն ունենա շարժական կամ անշարժ արկղ: Այս արկղում հավաքելով կեղտոտությունները և մեղը, արտաքինոցն ամեն անգամ ողտապործելուց հետո ծածկվում է տորֆով, չոր տորֆե ցամբարով,



Նկ. 1. Արտաքին արտաքինոց վայրից պատրաստված. Ա—ձղական խողովակ, Բ—խիտ ցանցով ծածկված լուսամուտը ճանճերից պաշտպանելու համար, Գ—ճախարակի ծանրոցով դուրս փակելու համար, Դ—յերկաթաթիթեղ, Ե—մեղն ընդունող խողովակ, Զ—սեղանիկ, Ը—դռնակի (լյուկի) կախարչների միջև յեղած լիցքը, Թ—կավաչաղախ:

տորֆի մանրուքներով, հարդով և մոխրով, ինչպես և բանջարանոցի, այգու կամ նույնիսկ սովորական ճմահողով: Մասնանշված նյութերը կեղտոտությունների վրա լցնելը վերացնում է դարչահատ դադերի գոյացումը, քանի վոր կեղտոտության վրա լցվող այդ նյութերը կլանում են դարչահատ դադերը:

Չոր տորֆը վոչ միայն դադերն և կլանում, այլև ներծծում է իր մեջ մեծ քանակությամբ հեղուկ: Դրա համար ել, յերբ կեղտոտության վրա տորֆ կամ ուրիշ նյութեր են լցվում, կեղտոտությունները և մեզը չեն ներծծվում հողի մեջ և չեն կեղտոտում ջրհորների ջուրը: Կեղտոտությունները տորֆով կամ հողով մշակվելու հետևանքով գոյացած խառնուրդը (այսպես կոչված տորֆակղզանքը) կարելի յե լիովին ոգտադործել արժեքավոր կոմպոստային պարարտանյութ ստանալու համար:




Նկ. 2. Լուսափ-կղզեա պրահորի կառուցման սխեման. Ա—ձգվածք. Բ—աթոռակ. Գ—պրահորի դռնակ (լուկը). Դ—լավ շաղախված կավաշերտը. Ե—վառարանը:

Այսպիսի արտաքնոց կարելի յե կառուցել կոլտնտեսային բակում, բնակարանից անջատ, նրանից վորոչ հեռավորության վրա կամ թե բնակելի տանը կից գոյություն ունեցող սառը տեղում (սրահում): Վերջին դեպքում արտաքնոցը բնակելի շենքից բաժանվում է սրահով:

Արտաքնոցի շենքը կարելի յե կառուցել տեղում գտնվող նյութերից (տախտակ, քար, աղյուս և այլն):


Նկ. 3, 4, 5, 6 և 7-ում ցույց և տրված շարժական կամ անշարժ արկղով արտաքնոցի կառուցման սխեման: Միջանցիկ քամիներից և ճանճերից պաշտպանվելու համար արտաքնոցի պատերը, հատակը, կտուրը, աթոռակը և կախարիչը պատրաստում են ամուր, առանց ձեղքերի: Արտաքնոցի դուռը պետք է լավ և ամուր կերպով փակվի ծանրոցավոր ճախարակով կամ ուրիշ հարմարանքի միջոցով:

Արտաքնոցը լուսավորելու և ոդափոխելու համար պետք է պատրաստել մի լուսամուտ, վորն ամուրի տաք ժամանակ հանվում է, իսկ լուսամուտի բացվածքը ծածկվում է խիռ ցանցով, վորպեսզի ճանճերն արտաքնոցի մեջ չթուչեն: Աթոռակի («աչքի») ձվաձեղ անցքը պետք է փակվի ամուր կախարիչով:




Նկ. 3. Արտաքնոց, վորի կեղտոտությունները ծածկվում են տորֆով. Ա—տորֆը պահելու տեղ. Բ—տորֆի պահեստը տանող բացվածք:

Հանձնարարվում է արտաքնոցի կողքին մի տեղ շինել կեղտոտությունները լցնելու համար գործածվող տորֆ կամ ուրիշ նյութեր պահելու համար: Այս նյութերը կարելի յե պահել նաև կոլտնտեսականի բակի մեջ մի ուրիշ տանիքավոր շենքում: Կեղտը ծածկելու համար գործածվող տորֆը կամ ուրիշ նյութերը պետք է լինեն չոր և չպետք է սառչեն:



Նկ. 4. Արտաբնոցի տեսքը հեռակի կողմից. Ա—տուրֆի տեղը. Բ— ներքևի ող տախտակները:




Նկ. 5. Արտաբնոցի շենքի կտրվածք. Ա—Տուրֆի տեղը. Բ—ղունակի (լյուֆտի) կափարիչը կեղտոտությունները հեռացնելու համար:

Առանձնապես ուշադրություն պետք է դարձնել կեղտոտությունների արկղի կանոնավոր պատրաստման վրա:

Հողը անմաքրություններով կեղտոտվելուց պաշտպանելու համար պետք է այդ արկղը տեղավորել կավե հիմքի վրա, այսպես կոչված 25—35 սանտիմետր հաստություն ունեցող կավե բարձի վրա, չորը պատրաստվում է մաքուր (առանց ալյաղի խառնուրդի), լավ չաղախված և տոփանած կավից (նկ. 6 և 7):

Կեղտոտությունների արկղը պետք է լինի ամուր, պատրաստված:




Նկ. 6. Անշարժ արկղով արտաբնոցի ուղղաձիգ կտրվածքը. Ա—արտաբնոցի դուռը. Բ—լուսամուտի ցանցը. Գ—աթոռակի բացվածքի կափարիչը. Դ—կեղտոտությունների անշարժ արկղը. Ե—կավաշաղախը:

երբար հաղցվող տախտակներից կամ Է և կեսից մինչև Ծ և կես սանտիմետր հաստությամբ տախտակներից:

Արկղը պետք է բաղկացած լինի հատակից, առջևի պատից և յերկու կողապատից: Վորպես հետին պատ ծառայում է տախտակներից ամուր պատրաստված հենովի վահանակը, վորն ամբացվում է պտուտակով:

Արկղը ներսի կողմից և տախտակների բոլոր ճեղքերը պետք է ուշի-ուշով յերկու անգամ ձյութել:

Այն հողը, վորը դուրս է հանված կալի բարձր հիմնադրելու համար, պետք է վերևից տոփանված լինի արկղի շուրջը թեքվածքի ձևով այնպես, վոր հալճուցի և անձրևային ջրերը չներհոսեն արկղի մեջ:



Նկ. 7. Եարժական արկղ ունեցող արտաքնոցի ուղղածիկ կտրվածքը. Ա—արտաքնոցի դուռը. Բ—ուսածուռի ցանցը. Գ—կեղտոտությունների համար շարժական արկղը. Դ—կավաչաղախը. Ե—աթոռակի դռնակի կտրաբեկը:

Նախքան արկղի ողտազործելը նրա հատակի վրա լցվում է մի քիչ շոր տորֆ կամ վերևում նշված նյութերից վորևե մեկը: Այս նը պատում է, վոր կղկղանքը և մեղը լավ ներծծվեն:

Արկղի մեջ կեղտոտությունները ծածկվում են արտաքնոցն ամեն անգամ ողտազործելուց անմիջապես հետո: Դրա համար արտաքնոցի շենքում աթոռակի վրա դրվում է մի փոքր արկղ՝ կեղտոտությունները ծածկելու նյութի մի որվա պաշարով և նրա հետ մի թիակ, կամ արտաքնոցի կողքին պիտի շինել տորֆի տեղ իր դռնակով

(Նկ. 3): Ամեն անգամ արտաքնոց գնալուց հետո կեղտոտությունները պետք է ծածկել այս ցամաքարով:

Կեղտոտությունները ծածկելիս նրանք խառնվում են տորֆի կամ հողի հետ, կորցնում են իրենց վատ հոտը և ձեռք են բերում գրեթե նորմալ հողի տեսք:

Արկղի պարունակությունը, յերբ այն լցվում է, հեշտությամբ ջրերի յե դատարկել բահիկով հետևի պատի (հանվող վահանի) կողմից. այդ պարունակությունը կարելի յե լցնել կոմպոստային կույտի մեջ և ողտազործել հողը պարարտացնելու համար:

Արկղի պարունակությունը դուրս հանելուց հետո նրա հատակին վերստին պետք է լցնել մի քիչ տորֆ կամ նշված նյութերից վորևե մեկը:

Նման արտաքնոց կարելի յե կառուցել նաև շարժական արկղով (Նկ. 7):

Կեղտոտությունները տորֆով կամ հողով ծածկելը կարելի յե կատարել և աղբահոր ունեցող սառն արտաքնոցում:

Դ) Փ ի ն Վ ա ն դ ա կ ա ն տ ի պ ի ա Ր տ ա ք ն ո ց : Բացի արկղ ունեցող սառն արտաքնոցից, կոլտնտեսականների բա- կում կարելի յե հանձնարարել կիսատուք արտաքնոցի կառուցումը կոլտնտեսականի ծածկած շենքի ներսում:

Այդպիսի արտաքնոցում արկղի փոխարեն կեղտոտությունների համար հավաքատեղ ծառայում է հողե հատակի հրապարակը, վորը հեղուկ կեղտոտությունները հողի մեջ ներծծելուց պաշտպանելու համար տոփանվում է մաքուր շաղախված կավի 25—35 սանտիմետր հաստություն ունեցող մի շերտով: Այս տոփանված հրապարակի յեղրերը շրջապատվում են վոչ մեծ թմբով, վորպեսզի թույլ չտան հեղուկ կեղտոտությունների արտահոսումը հրապարակից:

Հրապարակի վրա կառուցվում է աթոռակի և արտաքնոցի շենքը: Բակի կողմից արտաքնոցի պատը մինչև հատակը չի հասցվում, իսկ բացվածքը փակվում է տախտակներից ամուր կերպով հարմա- րեցրած վրադիր վահանով:

Աթոռակի տակ ժամանակ առ ժամանակ դրվում է գոմում գործածվող ցամաքաբծղոտ կամ տորֆ:

Ցամաքի հետ խառնված կեղտոտությունները կորցնում են ի- րենց սահմ հոտը և չեն փչացնում չրջակա ողը:

Ցամաքի հետ խառնված կեղտոտությունները, յերբ շատ են կուտակվում, հեռացվում են, լցվում կոմպոստային կույտի մեջ կամ գոմաղբի հետ միասին դոմաղբապահեստները և ողտազործվում են գյուղատնտեսության մեջ վորպես պարարտանյութ:

Յեթե արտաքնոցը կառուցվում է շենքի ներսում, անհրաժեշտ է այն տեղավորել դռնից դուրս, կովերի կթելատեղից հեռու, վորպես- ղի դուրյը և կաթը անմաքրություններով չկեղտոտվեն:

Այսպիսի արտաքնոց կարելի յե կառուցել նաև անմիջականորեն դռնադրի պահեստի վրա:

Կոլոննասականի բակի ներսում արտաքնոցը հարկավոր է կա- ուցել այնպես, վոր կովերն ու խոզերը չլիում շունենան մարդկա- յին կեղտոտությունների հետ: Այս անհրաժեշտ է կեղտոտություն- ների մեջ դանվող յերկրորդների ձվերով վարակվելուց կենդանիներին նախապահպանելու համար:

Պետք է նկատի ունենալ, վոր կերակրի մեջ կովերի ու խոզերի հում, անբավարար յեփված կամ քիչ արորված յերկրորդի ֆիննոզներ- րով վարակված միսն ուղտադործելուց վարակվում են նաև մարդիկ:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ՊԱՇԵԼ ԱՐՏԱՔՆՈՅԸ

Անհրաժեշտ է վոչ միայն կանոնավոր պատրաստել արտաքնոցը, այլ և լավ պահել այն: Անվույթ ողտադործելուց լավ պատրաստ- ված արտաքնոցը ևս կարող է վարակիչ հիվանդությունների տարած- ման աղբյուր դառնալ:

Արտաքնոցը պետք է մաքուր պահել: Ամենից առաջ անհրաժեշտ է, վոր ամեն վոք, ով ողտվում է արտաքնոցից, պահպանի մաքրու- թյուն և մաքրասիրություն:

Վորպեսզի արտաքնոցն ողտադործելիս կոլոննասականները կա- րողանան պահպանել անձնական հիգիենայի և մաքրության կանոննե- րը, արտաքնոցում շարունակ պետք է թուղթ լինի:

Ամեն անգամ արտաքնոց դնալուց հետո պետք է անպայման ձեռ- ները լվանալ սալոնով: Արտաքնոցում կեղտոտված ձեռներով կարող են փոխանցվել այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են վորովայ- նատիֆը, դիզենտերիան, ինչպես և ճիճուներ: Կեղտոտ ձեռների մաշ- կի վրա, առանձնապես յերունդների տակից հանված կեղտի մեջ, դանվում են դանազան միկրոբներ և ճիճուների ձվեր:

Արտաքնոցի շենքն անհրաժեշտ է ամեն օր մաքրել, լվանալ ու սխառնատիկորեն ախտահանել: Արտաքնոցն ախտահանելու և նրա մեջ դանվող ճանձների դեմ պայքարելու համար տարվա տաք ժամա- նակ հանձնարարվում է ամեն 2—3 օրը մեկ արտաքնոցում կեղտո- տությունների վրա շող տալ քլորակրի փոշի հետևյալ հաշվով. կեղ- տոտության մեկ քառակուսի մետր տարածության վրա 400 գրամ փոշի, կամ թե լցնել թարմ պատրաստված քլորակրի 10 տոկոսանի

լուծույթ, այսպես կոչված քլորակրակաթ: Այդպիսի լուծույթ պատ- յաստելու համար վերցնում են 1 1/2 կիլոգրամ քլորակրի մի դուրյը ջը- րին: Հարկավոր քանակությամբ լուծույթ պատրաստելու համար կը- ոտում են քլորակրի անհրաժեշտ քանակությունը և այն լուծում սկզբ- բում ջրի վոչ մեծ քանակության մեջ, խնամքով թափահարում են և կտրները մանրացնում: Այդ ձևով ստացված թանձր լուծույթը նոսրացնում են մեկ դուրյը ջրի մեջ:

Քլորակրի կես դուրյը բավական է կեղտոտությունների մեկ քա- տակուսի մետր մակերեսին լցնելու համար, այն պայմանով, վոր լու- ծույթը մակերեսի վրա տարածվի հավասարաչափ: Յեթե արտաքնո- ցը դանվում է շենքի ներսում, ապա ամեն անգամ կեղտոտություն- ների վրա քլորակրակաթ լցնելուց հետո շենքը պետք է ոգափոխել:

Քլորակրը պետք է պահել սմուր, լավ խցանված ամանի մեջ (կախարիչ ունեցող տակառ կամ արկղ) չոր, մութ, սառը և լավ օդափոխվող շենքում: Քլորակրն անկանոն պահելուց փչանում է: Քլորակրը դործածելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր քլորա- կրի փոշու և նրա ջրային լուծույթի հետ անկանոն վերաբերվելուց կարող են առաջ դալ մարմնի այրվածքներ, փչանան կոշիկները և հաղուստեղներ: Այդ պատճառով ել քլորակրի հետ դործ ունենալիս հարկավոր է զրուշություն պահպանել, խուսափել լուծույթի ցաղ- տելուց և փոշին հաղուստի, կոշիկների, ձեռքերի ու յերեսի վրա ընկնելուց: Գյուղական կոտպերացիան պետք է հողա, վոր միշտ քլո- յակրի պաշար ունենա կոլոննասականներին սպառարկելու համար:

52655
932655

ԿՈՄՊՈՍԱՅԻՆ ԿՈՒՅՏԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ ՅԵՎ ՊԱՇԵԼԸ

Մենք արդեն վերևում մատնանշեցինք, վոր կոմպոստն արժեքա- վոր պարարտանյութ է հողի բերքատվությունը բարձրացնելու հա- մար և վոր նա իր մեջ պարունակում է այնպիսի նյութեր (ազոտ, ֆոսֆոր, կալիում), վորոնք անհրաժեշտ են բույսերի կյանքի հա- մար:


Կոմպոստ ստանալու համար վորպես նյութ կարող են ծառայել արտաքնոցի կեղտոտությունները, ինչպես և դանազան անպետք թա- փոնները: Կոմպոստային պարարտանյութ ստանալու ամենից ափելի հասարակ յեղանակը կոմպոստային կույտեր պատրաստելն է:

Կոմպոստային կույտը կարող է հիմնվել կոլոննասականի տնա- մերձ հողում, արտաքնոցի կողքին, բնակարանից վոչ պակաս 15—20 մետր և ջրհորից 20—30 մետր հեռավորության վրա:



Կոմպոստային կույտն ըստ հնարավորութեան պետք է տեղափոխել հարթ տարածութեան վրա, վրը պաշտպանված լինի անձրևային և ձյունհալի ջրերի հեղեղումներից: Ընտրված տարածութեանը, վոր ունենում է մոտ յերեք մետր լայնութիւն և ըստ կարիքի յերկարութիւն, տոփանում են կավի շերտով 20—30 սմ. տարածութեամբ լավ մամլված և չըջպատում են հողի թմբով ու ջրատար ակոսով, վորպեսզի կոմպոստային հեղուկը դուրս չհոսի և կոմպոստային կույտի մեջ դրսից անձրևաջրեր չհոսեն (նկ. 8): Այդ ձևով պատրաստված տարածութեան վրա լցնում են տորֆի մի շերտ, բանջարանոցի կամ այգու չոր հող կամ վերջապես հնացած կոմպոստի մի շերտ մոտավորապես 15—20 սանտիմետր հաստութեամբ, իսկ այնուհետև այդտեղ լցնում են արտաքնոցի կեղտոտութիւններ կամ ուրիշ թափոններ: Այդպիսի կոմպոստային կույտի մեջ, բացի արտաքնոցի կեղտոտութիւններից, կարելի յե լցնել և ուրիշ զանազան թափոններ՝ թռչունների ծերտը, տան, բակի, փողոցի աղբը, խոհանոցի մնացորդները (յեթե նրանցով չեն կերակրում անասուններին) փրեր, տերեւեր, կեղտաջրեր և վառարանի մոխիր:

Կոմպոստային կույտի մեջ չի կարելի լցնել այնպիսի թափոններ, վորոնք չեն նեխվում, ինչպես որինակ, ջարդված ապակիներ, շինարարական աղբ, թիթեղյա բանկաներ, վոսկորներ և այլն: Կոմպոստային կույտի մեջ չի կարելի լցնել նաև այնպիսի կեղտոտութիւններ, վորոնք ստացվում են դուրդատնտեսական մնացորդների և բույսերի հիվանդութիւնների դեմ մղած պայքարում, որինակ, մոլախոտերի սերմերը, հոտած կարտոֆիլ և այլն: Այդպիսի թափոնները պետք է այրել:




Նկ. 8. Կոմպոստային կույտի սխեման. Ա—տորֆի շերտը, Գ—կավաշաղախը, Դ—ջուրը հոսելու ակոսը:

Կոմպոստային կույտի մեջ մտցրած թափոնները տեղափոխվում են սանտիմետր հաստութիւն ունեցող հավասարաչափ շերտերով: Արտաքնոցի կեղտոտութիւնները, թռչունների ծերտը և խոհ-

նոցային թափոնները հարկավոր է անմիջապես ծածկել չոր տորֆով կամ հին հասունացած կոմպոստով:

Այս արվում է նրա համար, վորպեսզի թափոններից վատ հոտ չիչի, վորպեսզի ճանձերը չկարողանան նրանց վրա ձվեր դնել և վորպեսզի կոմպոստային կույտի մեջ թափոնների քայքայումն արագ տեղի ունենա: Թափոնները ողտակար և ծածկել նաև ուրիշ չոր տափանջերով (հարդ, մղեղ, տերեվ), վորոնք նպաստում են կոմպոստային կույտի մեջ ող մտցնելուն: Այդ ձևով կոմպոստային կույտն աստիճանաբար կիտվում է մինչև մեկ մետր բարձրութեամբ:

Կոմպոստային կույտը շարունակ հարկավոր է պահել չափավոր խոնավ դրութեամբ: Այս նպատակով լավ է կոմպոստային կույտը պատրաստել ծառերի ստվերի տակ կամ թեթև ծածկի տակ (նկ. 9): Ժամանակ առ ժամանակ կոմպոստային կույտի մակերեսը հարկավոր է հավասարաչափ թրջել տնտեսութեան կեղտաջրերով, դոմաղբի հեղուկով, սապոնի կամ ուղղակի հոտարակ ջրով: Կույտի մեջ մտցված թափոնների շուտափուլ թայքայման և կոմպոստի լավ հասունացման համար անհրաժեշտ է կույտը տարին 2—3 անգամ լավ խառնել, կույտի պարունակութեանը տեղափոխել մի տեղից մյուս տեղը, այն-



Նկ. 9. Կոմպոստային կույտը ծածկի տակ:

պես, վոր ծայրերը և վերին շերտը ընկնեն կույտի մեջտեղը: Կոմպոստի վորակը լավացնելու համար հանձնարարվում է կույտը ծածկել կրով կամ վառարանի սովորական մոխիրով:

Մոխիրը կոմպոստի վրա ցանվում է բարակ շերտով: Չմեղը կոմպոստային կույտը պետք է ծածկել ծղոտով կամ ցախերով, վորպեսզի չսառչի: Կոմպոստային կույտը պետք է ցախերով կամ ցան-

ցաւոր վահանակներով պաշտպանել նաև տնային խաչուհները ու կենդանիների պտրտելուց:

Մտաւորապես մի տարուց հետո կույտի մեջ հասունանում է կոմպոստը:

Պատրաստի կոմպոստն ունի միատեսակ հողանման տեսք և վատ հոտ չի արձակում: Կոմպոստային կույտը կանոնավոր կերպով պատրաստելիս և պահելիս հասունացած կոմպոստի մեջ թափոնները միանգամայն քայքայվում են և վեր են ածվում անմիաս նյութերի, իսկ թափոնների մեջ դտնվող վարակիչ միկրոբները վոչնչանում են: Այդպիսով, կոմպոստային կույտեր պատրաստելը վոչ միայն արժեքավոր պարարտանյութ, այլ և լավ արդյունքներ է տալիս սանիտարական տեսակետից:

Նկատի ունենալով, վոր կոմպոստի հասունացման համար պահանջվում է մոտ մի տարի, կոլտնտեսական տնամերձ հողում ալելի լավ է ունենալ վոչ թե մեկ, այլ յերկու կոմպոստային կույտ, վորոնցից մեկը լցվում է թափոններով, իսկ մյուսում՝ լցվածում հասունանում է կոմպոստը:

Վորպեսզի ճանճերին կոմպոստի մեջ ձու ածելու հնարավորութուն չտրվի, անհրաժեշտ է վերջացրած կոմպոստային կույտի մակերեսին լցնել տորֆի կամ հողի 10—15 սմ հաստութուն ունեցող շերտ:

ԳՈՍԱՂԲԻ ՀԱՎԱՔԵԼԸ ՅԵՎ ՊԱՇԵԼԸ

Կենդանիների դոմադրը և մեզը դոմերից և ախոններից պետք է հավաքել դոմադրապահեստարանում և մեզի հավաքատեղում:

Գոմերում և ուրիշ անասնաբուժական շենքերում հատակները կենդանիների հեղուկ կեղտոտությունների համար պետք է լինեն անթափանց: Մեզի հոսելու համար հատակի մեջ հարկավոր է պատրաստել փողրակ, փորով կենդանիների մեզը պետք է հոսի դեպի մեղի հավաքատեղը, վորը պետք է լինի դոմի մոտ:

Շրջակա հողը և ջրի աղբյուրները կեղտոտվելուց պաշտպանելու համար մեզի հավաքատեղի հատակը և պատերը պետք է հեղուկների համար անթափանցելի լինեն: Մեզի հավաքատեղը վերևից ամուր կերպով փակվում է կափարիչով: Ամենից լավ է դոմադր պահելու տեղը պատրաստել փակ ձևով, նրա հատակը և կողպատերը ևս հեղուկ կեղտոտությունների համար պետք է անթափանց լինեն:

Գոմադրի հորերը կանոնավոր կառուցելու համար կոլտնտեսականները պետք է խորհրդակցեն շրջանային հողբաժնի անասնաբուժի կամ գոտետնիկի հետ:

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՇԵՌԱՑՈՒՄԸ ԿՈՆՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԻՑ

Թափոններից ստացված կոմպոստային պարարտանյութը կարելի է դաշտ տեղափոխել այն սայլակներով, վորոնցով դուրս է սարվում դոմադրը: Արտաքնոցների աղբահորերից վոչ կոմպոստացած հեղուկ կեղտոտությունները տեղափոխելու համար անհրաժեշտ է ունենալ հատուկ աղբահանական տակառ: Ամեն մի կոլտնտեսային դյուղում պետք է լինի աղբահանական տակառ (մեկ կամ մի քանի հատ, ըստ կարիքի):

Տակառը հեղուկ կեղտոտությունների համար պատրաստվում է անթափանցելի և դատարկելու ու լցնելու լավ փակվող անցքերով:

Փոխադրության ժամանակ կեղտոտությունները տակառից չպետք է դուրս ցայտեն: Ամեն մի կոլտնտեսային դյուղում հարկավոր է ունենալ հատուկ սայլակ, բացառապես սատկած կենդանիների դիակները անասնադերեզմանոց, ուտիլիզացիոն դործարան կամ ճարպահարան տեղափոխելու համար:

Այդպիսի սայլակներն ուրիշ վոչ մի նպատակի համար չպետք է ողտադործվեն:

Յեթե կոլտնտեսային դյուղից դուրս տարվող թափոնները յերկար ժամանակ պահվում են դաշտում, վորպեսզի հետո ողտադործվեն վորպես պարարտանյութ, ապա նրանց պահելու համար անհրաժեշտ է հատկացնել հատուկ տարածություն, ըստ հնարավորին անջրաթափանց և պարարտացվող հողամասերին մոտիկ տեղ:

Այն հողամասը, վոր հատկացվում է թափոնները ժամանակավորապես պահելու համար, չըջատվում է կես մետր խորություն ունեցող մի առվակով և մի թմբով, թափոնները չըջակա տերիտորիայում անձրևային ջրերից քշվել-տարվելուց պաշտպանելու համար:

Թափոնները վորպես պարարտանյութ ալելի կանոնավոր ողտադործելու համար պետք է այս հարցի վերաբերյալ խորհրդակցել տեղի դյուղատնտեսների հետ: Գյուղատնտեսը ցուցումներ կտա ինչպես թափոնները դաշտ դուրս հանելու ժամանակի մասին, այնպես և այն քանակի մասին, վոր անհրաժեշտ է այս կամ այն կուլտուրաների համար: Թափոնները վորպես պարարտանյութ ողտադործելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ սանիտարական պահանջները.

1. Թարմ, վոչ կոմպոստված կեղտոտություններով, ինչպես և մեզով ու կոմպոստացման չենթարկված աղբերով պարարտացված հողամասերում առաջին տարին չի կարելի տնկել սննդի մեջ հում

դրությամբ ոգտադործվող բանջարեղեններ (վարունգ, սալաթ, պամիդոր, բողի, սոխ, և այլն), ինչպես և հատապտուղներ:

2. Գյուղատնտեսութեան մեջ պարարտացման համար չի կարելի ոգտադործել բուժական հիմնարկների կեղտոտութեանները և աղբերը:

Այդպիսի թափոնները պետք է վոջնացնել սեղում կամ վարակազերծել սանիտարական հսկողութեան ցուցումներով: Առանց անասնաբուժական հսկողութեան թուլտվութեան չի կարելի ոգտադործել նաև վարակիչ հիվանդութեաններով հիվանդ անասունների դոմաղբը:

3. Դաշտ տարված թափոնները չպետք է լվացվեն անձրևաջրերով և հոսեն դեպի կոլտնտեսային գյուղ կամ կոլտնտեսային ջրամատակարարման աղբյուրները: Դրա համար դաշտում շաղարիւղիք թափոնները անհրաժեշտ է իր ժամանակին հերկել:

4. Այն անձինք, վորոնք զբաղվում են կոլտնտեսային գյուղից կեղտոտութեաններ դուրս տանելով և կեղտոտութեաններով կոմպոստային կուլտեր հիմնադրելու աշխատանք են կատարում, ճիճուներով և այլ վարակիչ հիվանդութեաններով վարակվելուց նախազգուշանալու համար պետք է առանձնապես զգուշանան և սխտեմատիկորեն ձեռքերը լվանան սապոնով:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այն ամենից, ինչի մասին այստեղ մենք խոսեցինք, յերևում է, վոր կոլտնտեսային գյուղի տերիտորիան և առանձին կոլտնտեսականների անամերձ հողամասերը մաքուր պահելը մեծ նշանակալի դեր ունի չի պահանջում: Բոլոր այս միջոցառումները հեշտութեամբ կարող են իրականանալ ամեն մի կոլտնտեսութեան և առանձին կոլտնտեսականների ուժերով ու միջոցներով: Այս գործում կարող են և պետք է մեծ ոգնութեան ցույց տան հասարակական սանիտարական լիազորները: Հասարակական սանիտարական լիազորների առջև մեծ խնդիրներ են կանգնած իրենց գյուղերը զանազան տեսակի թափոններից մաքրելու աշխատանքը կազմակերպելու գործում:

Հասարակական սանիտարական լիազորների աշխատանքը կարելի է վորագույն նշանակութեան ունի կոլտնտեսութեանների սանիտարական բարեկարգումը հետադաշտում բարելավելու և այնպիսի հիվանդութեանների դեմ պայքարելու գործում, ինչպիսիք են ամառային մանկական լուծերը, դիզենտերիան:

Հասարակական սանիտարական լիազորները պետք է.

1. Հետևեն, վոր յուրաքանչյուր կոլտնտեսականի բակում ար-

տաքնոց պատրաստվի, պետք է բացատրեն կոլտնտեսականներին, թե ինչպես կանոնավոր շինել և պահել արտաքնոցը:

2. Հետևեն, վոր բոլոր հասարակական նշանակութեան ունեցող շենքերին կից՝ գյուղխորհուրդ, կոլտնտեսութեան, աղումբ, դպրոց, մսուր, մանկահարպարակ, կոլտնտեսականի տուն, խրճիթ-ընթերցարան, ինչպես և շուկայի հրապարակում հասարակական արտաքնոցներ շինվեն:

3. Գյուղատնտեսի և բժշկական տեղամասի բժշկի հետ թիասին պետք է կոլտնտեսականներին բացատրեն թափոնները կոմպոստացման յենթարկելու և թափոններից գյուղատնտեսական նպատակների համար կոմպոստային պարարտանյութ ստանալու նպատակահարմարութեանը:

4. Աղիքային վարակիչ հիվանդութեանների զարգացումը կանխելու համար կոլտնտեսութեանից և առանձին կոլտնտեսականներից պահանջել թափոններն իր ժամանակին հեռացնել և տարվա տաք ամիսներին կատարել ախտահանում:

5. Ստուգել, թե արտաքնոցները մաքուր են պահվում, թե վոջ:

6. Զթուլատրել գետերի ափերին, ձորակների շուրջը, բնակարանների և ջրամատակարարման աղբյուրներին մոտիկ թափոններ թափել:

Հետևել դաշտերի և բանջարանոցների պարարտացման համար թափոնների կանոնավոր ոգտադործմանը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սանիտարական կուլտուրան կուլտնտեսություններին	3
Ինչպես և ինչպիսի արտաքնոց պետք է կառուցել կուլտնտեսություններում	6
Ինչպես պետք է պահել արտաքնոցը	16
Կոմպոստային կուլտեր պատրաստելը և պահելը	17
Գոմաղբի հավաքելը և պահելը	20
Թափոնների հեռացումը կուլտնտեսային գյուղից	21
Հոտորակական սանիտարական լիազորների աշխատանքը	22

Թարգմանեց՝

Յ. Մազմանյան

Պատ. խմբագիր՝

Ն. Հակոբյան

Լեզվական խմբագիր՝

Հ. Հարությունյան

Տեխ. խմբագիր՝

Ա. Գասպարյան

Սրբագրել՝

Վ. Ավագյան

Գլավկիտի լիազոր՝ Ս—428. Հրատ. 5265.

Պատվեր 439. Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 2/VI 1940 թ.

Ստորագրված է տպագրության 20/VI 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65

«Ազգային գրադարան»



NL0275894

ԳԻՆԸ 40 Կ.

3502

30000

В. Н. РЯБОВ
Санитарное
благоустройство
в колхозе
Армгис, Ереван, 1940 г.

Нар. отд.